

ՀԱՐԿ Է ՊԱՇՏՊԱՆԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

ՓԱԹԻՔ ՖԱՐԱՃԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ Հ. Յ. Դ. ԼԻՔԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Երեկ յետմիջօրէին, «ՍՈՏԸԹԷԼ»-ի նոր նշանակուած տնօրէն խորհուրդի նախագահ Փաթիք Ֆարաճեան այցելեց Հ. Յ. Դ. Լիքանանի Կեդրոնական Կոմիտէի գրասենեակ, «Շաղկոյնեան» կեդրոն, եւ տեսակցութիւն մը ունեցաւ Կեդրոնական Կոմիտէի ընկերներուն հետ, որոնք շնորհաւորեցին Ֆարաճեանի կարեւոր նշանակումը եւ յաջողութիւն մաղթեցին անոր աշխատանքներուն:

ԴԵՄՊԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՆԱԽԱՐԱՐ ՕՊԷՅՏԻ ՍՕՏ



Արտաքին գործոց եւ արտերկրի իրանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ Պուսթրոս պալատին մէջ ընդունեց Լիքանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանը, որուն հետ ըննարկեց իրանական հայկական երկկողմանի յարաբերութիւնները եւ գանձք բարելաւելու հեռանկարները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը մեր յարգոյ ազգայիններուն կը յայտնէ, որ ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն կէսօրը ետք ժամը 5:00, իսկ Շաբաթ օրերը առաւօտեան ժամը 8:30էն 12:30, կ'ընդունի դիմումներ գանձազան նախարարութիւններու եւ պետական հաստատութիւններու կապուած որեւէ հարցի վերաբերեալ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Հ.Ս.Ը.Ս. ԺՈՒՆԻԵԻ ՄԱՍՆԱՃԻՂ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Հ.Ս.Ը.Ս. ԺՈՒՆԻԵԻ մասնաճիւղի վարչութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ իր կազմակերպած 5 Յունիս 2003ի վիճակաձգումի թիւն է 191: Սոյն թիւին պարգեւը ստացաւ արմ. Յարութ Գասնճեան (Ձալքայի շրջան), իբրեւ փոխարժեք տրամադրուած քապիկը:

ԱՄԱՌՆԱՅԻՆ ՅԱՅՏԱԳԻՐ COLONIE
Կազմակերպութեամբ՝ Ս. ԵՒ Շ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ 8 ՅՈՒՆԻՍԵՆ - 28 ՕԳՈՍՏՈՍ 3ԷՆ 13 տարեկան փոքրերու եւ պատանիներու համար Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը առաւօտեան ժամը 9:00էն 1:30
●ԶԲԱՂՈՒՍՆԵՐ՝ մասնագետ ուսուցիչներու մասնակցութեամբ՝ Հայկական պար, dance moderne, գծագրութիւն, ձեռնային աշխատանք, ձատրակ, պասքեթպոլ, ֆութպոլ, փինկ փոնկ, kung fu, հայերէն լեզուի դասընթացք, արաբերէն եւ ֆրանսերէն լեզուներու վարժութիւն (pratique), գրոյց եւ խաղեր:

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ նկատել տուաւ, որ երկրին մէջ բարեկարգումի շարժումը կը պահանջէ կամար աշխատանք բոլորին կողմէ, այլապէս բոլորը պիտի վնասուին, առանց բացառութեան:


Նախագահ Լահուտ ըսաւ, որ պետութեան պատասխանատուութիւնն է պահպանել իր իրաւունքները եւ աղբիւրները, ինչպէս նաեւ աշխատի կրճատել միտումները: Ան ընդգրծեց, որ պետութիւնը միշտ պէտք է Կորուար լլայել ծառայէ քաղաքացիներուն եւ ոչ թէ հակառակը:

Նախագահ Լահուտ շեշտեց, որ հարկ է պահպանել ազգային սկզբունքներն ու արժանիքները, որովհետեւ անոնց շնորհիւ է, որ Լիքանան կրցաւ ապատարել իր բռնագրաւուած հողերուն մեծ մասը հարաւային Լիքանանի մէջ իւրախեցնել գերիշխանութիւնէն, ինչպէս նաեւ երկրին մէջ ամրապնդել կայունութիւնը:

Նախագահ Լահուտ այսուայսարարութիւնները կատարեց Լիքանանեան Ժողովրդային Համագումարի մէջ կատարուող խորհրդակցութիւնը (նախագահութեամբ Քամալ Շաթիլի) ընդունած ծամանակ: Քննարկումի առարկայ դարձան նաեւ տեղական եւ շրջանային հարցեր:

Շաթիլ յայտնեց, որ համագումարը կը կատարուի նախագահ Լահուտի կատարած երդումին:

Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ տնտեսութեան եւ առեւտուրի նախարար Մարուս Համատեան, որուն հետ քննարկեց ներլիքանանեան հարցեր, շրջանային իրադարձութիւնները եւ նախանցեալ օրուան կատարած զոր-



նավարութեան նիւտին վերաբերող մանրամասնութիւնները:

Համատե Ըսաւ, որ նախագահ Լահուտի ներկայացուցած Գալերմոյի մէջ կայանալիք եւրոպական միջերկրականեան գործակցութեան խորհրդածողովին Լիքանանի մասնակցութիւնը:

Համատե ներկայացուց նաեւ նախարարութեան կողմէ մշակուող պահանջները: Միւս կողմէ, նախագահ Լահուտ երէկ շնորհաւորական հեռագիր մը լղեց Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Գուշի՝ Նահանգներու անկախութեան տօնին առիթով:

մէջ կայացած Արաբական Դրամատուներու Համադաշնակցութեան խորհրդածողովին իր մասնակցութեան արդիւնքները:

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտի անունով էլիզե Ալամը յետմահու պարգեւատրեց Մայրիներու Ազգային շքանշանով:

ԷԼԻԶԵ ԱԼԱՄԻ ՄԱՐՄԻՆԸ ՅԱՆՁՆՈՒԵՑԱՒ ՀՈՂԻՆ

Ֆրանսայի մէջ երկար տարիներ Լիքանանի դեսպան պաշտօն վարած եւ նախանցեալ օր իր մահկանացու կնքած էլիզե Ալամի յուղարկութիւնը կատարուեցաւ երէկ, Պէյրութի մէջ:

Յուղարկութեան արարողութեան ներկայ գտնուեցան նախագահ Գոր. Էմիլ Լահուտի ներկայացուցիչ նախարար Ժան Օպէյտ, խորհրդարանի նախագահ Նեպիթ Պըրրի ներկայացուցիչ երեսփոխան Նամթալ Լալի Նասրը եւ վարչապետ Ռաֆիք Հարիրի ներկայացուցիչ նախարար Ֆուատ Սինիրա, մեծ թիւով նախարարներ ու երեսփոխաններ, Լիքանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէ, կուսակցականներ, հոգեւորականներ եւ պատասխանատու զիրքեր վարող բազմաթիւ անձնակազմի անդամներ:

Յուղարկութեան արարողութեան նախագահեց մարտիներու Նասրալլա Սֆէյր պատրիարքի ներկայացուցիչ, մարտիներու պատրիարքական ընդհանուր փոխանորդ Ռոյան Ապու ժառուէ եպիսկոպոս եւ մարտիներու Պէյրութի առաջնորդ Պուլուս Մաթար եպիսկոպոս:

Յուղարկութեան արարողութեան ետք Օպէյտ նախագահ Գոր. Էմիլ Լահուտի անունով էլիզե Ալամը յետմահու պարգեւատրեց Մայրիներու Ազգային շքանշանով:

Օպէյտ դրուատեց էլիզե Ալամի արժանիքները եւ Լիքանանի գերագոյն շահերու ապահովման նպատակով մատուցած ծառայութիւնները:

Իր կարգին, Լը Քուրթիէ ընթացից Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաքի նամակը ուղղուած Ալամի հանդէս տրուեց: Նախագահ Շիրաքը ցաւակցութիւն յայտնեց Ալամի մահուան առիթով եւ շեշտեց, որ ան օրինակելի ղեկավարութիւն ունեցած է Լիքանան - Ֆրանսա բարեկամութեան ամրապնդման մէջ: Նախագահ Շիրաքը ընդգծեց նաեւ, որ Ալամի յիշատակը ամուր Կիտի մնաց:

Յուղարկութեան արարողութեան ետք հանդէս տրուեց Լիքանանի փոխարքեպիսկոպոս Տարայա:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ՓՈՒՆ ՎԱՐՁԱՊԵՏ Իսամ Ֆարէս երէկ երեսփոխաններ Ճորճ Գասարճի, Ապտալլա Քասիրի, Նամթալլա Ապի Նասրի եւ նախկին նախարար Նեպիթ Պայտուսի հետ ըննարկեց երկրին վերջին գարգացումները, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները:

Ֆարէս պետական գործունէութեան եւ աշխատանքներու հակողութեան կեդրոնական վարչութեան ներկայացուցիչներու տեղեկագիր մը: Ան դրուատեց անոնց դերատարութիւնը, շեշտելով օրէնքներ յարգելու անհրաժեշտութիւնը իբրեւ երաշխիք երկրին գերագոյն շահերու պաշտպանութեան, քաղաքացիներու իրաւունքներու պահպանման եւ հաստատութեան կենտրոնական պետութեան կերտման:

Ֆարէս ընդունեց նաեւ Լիքանանի մէջ Իտալիոյ դեսպան Ֆրանչո Միսթրիի թղթը:

●ՄԱՐՈՆ ԻՆԵՐՈՒ Նասրալլա Պուրթուս Սֆէյր պատրիարքը երէկ Պրեքթի մէջ ընդունեց կենտրոնի:

նախարար Ֆարէս Պուրթուսը, որ կողմնակալ վերջ տալ քաղաքական պատերազմներուն եւ բոլոր տալ ժողովուրդին՝ ապրիլ երկրին մէջ մնացած թրուածիցով:

Հանդիպումէն ետք Պուրթուս յայտարարեց, որ Սֆէյր պատրիարքին հետ քննարկած է տեղական եւ շրջանային իրավիճակը:

Պրեքթը այցելեց նաեւ երեսփոխան Նեպիթ Լահուտ, որ յայտնեց, թէ ամբողջատ մահացներ կազմելու փորձեր գոյութիւն ունին թափ տալու համար ընտրական նոր օրէնք մը մշակելու աշխատանքին:

Լահուտ կողմնակալ վերապահեց իր քաղաքական գործունէութեան եւ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի անունով մշակուած մը: Ան ըսաւ, որ Թաթի համաձայնագիրին համաձայն՝ հարկ է ընտրաշրջանները բաժնել կամ ճշգրիտ մահացներու հիման վրայ: Լահուտ ընդգրծեց, որ քաղաքացիական ընտրութիւնները պէտք է գործադրուին:

●ՆԱԽԿԻՆ վարչապետ Սելիմ Հըս երէկ մամուլի ասուլիսի մը ընթացքին ներկայացուց երեսփոխանական ընտրութիւններու նոր օրինակներ մը, որ կը կեդրոնանայ նահանգներուն վրայ, գանձք վերածելով տարբեր ընտրաշրջաններու:

Ասուլիսին ներկայ գտնուեցան խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի, ինչպէս նաեւ մեծ թիւով երեսփոխաններ եւ կուսակցականներ: Հըս աւելցուց, որ նշեալ ծրագիրը կը ձեռնարկուի:

ԼԻՔԱՆԱՆԱՅՑ ԱՍԱՆԱՐՈՒԹՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (A.D.A.L)

Լիքանանայ Ատամնաբուժներու Միութեան վերջին ընդհանուր ժողովը ընտրեց իր նոր վարչութիւնը հետեւեալ կազմով:
Ատենապետ՝ տղք. Յակոբ Լոզոյեան
Փոխատենապետ՝ տղք. Յովիկ Գապուրեան
Զարտուղարուհի՝ տղք. Սոնա Տեմիրճեան
Գանձապահ՝ տղք. Մարտիկ Աւետիսեան
Հաշուապահ՝ տղք. Միսաք Ճապարայեան
Խորհրդակցանք՝ տղք. Շաւարշ Մաճառեան տղք. Իշխան Եղիայեան տղք. Խաչիկ Գուրշունեան տղք. Հրայր Փարթեան տղք. Շահի Փարթեան

ՅԵՏԱԶԳՈՒՄԸ

Ազգային Արգարեան վարժարանի հոգաբարձութեան կազմակերպած վիճակահանութեան ձեռնարկին վիճակաձգութիւնը, որ տեղի պիտի ունենար 5 Յունիս 2003ին, յետաձգուեց է 25 Սեպտեմբեր 2003ին:

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ա) 2003 - 2004 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ կը շարունակուին մինչեւ 25 Յունիս 2003, կէսօրը առաջ ժամը 9:00էն 12:00:
բ) Լրացուցիչ արձանագրութիւնները կ'ամբողջանան Սեպտեմբերի ընթացքին:
գ) Վերաքննութիւնները, մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան 23, 24 Սեպտեմբեր 2003ին, կէսօրը առաջ ժամը 9:00էն 12:00:
դ) Վարժարանին սակերը կը մնան նոյնը եւ ուսումնասիրուած: Կը տրամադրուին գեղջեր, յատկապէս փայլուն արդիւնք արձանագրող աշակերտներուն: Յատուկ դիւրութիւններ կ'ընծայուին օտար վարժարան հաստատուող աշակերտները ընդունելու համար:
ե) Վարժարանը ունի ֆրանսական թեքում, ինչպէս նաեւ փոխադրութեան կարելիութիւն:
զ) Յաւելեալ մանրամասնութիւններու համար, ձեռնարկէ 261622, կամ հանդիպիլ դպրոց:

ՎԱՐՁՈՒ ԶԵՂ ԶԱՐԿԱՐԱԺԻՆ

●ՃԷԼ ԷԼ Տիպ, «Հարպոյնեան» շէնք, Յոյ յարկ, 250 քառ. մետր, գեղատեսիլ դիրք: Դիմել՝ հեռ. 03 689408:

ԾԱԽՈՒ ՎԻԼԼԱ

●Աչքուրի հրապարակին մօտ, երեք յարկանի + պարտեզ: Դիմել՝ հեռ. 01-268051 եւ 01-897511:

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

●Այնճարի մէջ, 3 սենեակ, խոհանոց, բաղնիք, բակ եւ պարտեզ: Գին՝ 25,000 \$: Հեռ. 03-657177 եւ 08-620722:

Orientplus
Touch New Worlds
Farna \$319
3 days - Direct Charter Flight Every Tuesday starting from 8 July
Other Destinations
Boat Trip to Cyprus 3 Days \$190
Cyprus & Greece \$425
BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES
01.900598, 901598
03.258336, 256254
www.orientplus.com

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տեղեկացնում ենք, որ U. S. Agency International Development (USAID) գործակալութեան աջակցութեամբ, Armenia Agribusiness Small and Enterprise Market Development Project (ASME) ծրագրի շրջանակներում ու. ք. Յուլիսի 7-14ը Լիքանանում է գտնուելու Հայաստանի սննդարդիւնաբերութեան մի շարք ոլորտներ ներկայացնող ընկերութիւններից բաղկացած պատուիրակութիւնը:

Շահագրգիռ անհատները եւ կազմակերպութիւնները, որոնք կը ցանկանան Հայաստանից ներմուծել որակեալ եւ մատչելի սննդամթերք, ինչպէս նաեւ վերոնշեալ ընկերութիւնների ներկայացուցիչներին հետ քննարկել բազմապիսի համագործակցութեան հնարաւորութիւնները եւ պարզել իրենց համար հետաքրքրական բոլոր մանրամասները, կարող են դիմել Լիքանանում ՀՀ դեսպանութիւն:

ԼԻՔԱՆԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊՆՈՒԹԻՒՆ
Հասցե՝ 28 Ուի Տե Ժաման, Մթալլեպ
Հեռ. (04)418860

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային առաջնորդարանի ամառային ժամանակացոյցը ձեռնարկ է հետեւեալ ձևով:
●ՅՈՒՆԻՍ, 2003
Երկուշաբթի Ըրեքս ժամը 8:30էն 2:30
Շաբաթ՝ ժամը 8:30էն 1:00
●ՕԳՈՍՏՈՍ, 2003
Երկուշաբթի Ըրեքս ժամը 8:30էն 2:30
Շաբաթ՝ փակ

ԴԻՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՆՃԱՍՐ

ԱՐԺԵՒՈՐՈՒԱԾ 30ԱՄԵԱԿ ՄԸ

Հ. Յ. Դ. Լիբանանի երիտասարդական Միությանը այսօր 30 տարեկան է, եւ այդ 30ամեակի շուրջը յատուկ հանդիսութեամբ տեղի ունեցաւ Պէյրուսի մէջ:

Հիմերը կը յիշեն, 30ամեակ մը առջը Լիբանանի քաղաքացիական պատերազմի ծանր ու նշանակալից պայմանները: Այդ օրերէն էր, երբ Լիբանանի Հ. Յ. Դ. Պատանեական Միութեան կառուցաւ թափառում կը կատարուէր եւ կը ստեղծուէր Լիբանանի երիտասարդական Միութիւնը, իրեն կենսական անհրաժեշտութիւն լաւագոյն ստանձնելու համար լիբանանահայ հայկական թաղամասերու եւ հայկական հաստատութիւններու ինքնապաշտպանութեան ազգային առաքելութիւնը: Օր եղաւ, երբ քանի մը հազար երիտասարդներ, օրական 24 ժամ տեւողութեամբ, ընթացիկ իմաստով «պահակութիւն» ըրին, ներկայութիւն փաստելով Պէյրուսի տագնապալի ժամանակներուն հայահոծ թաղամասերու ազգային «տունները» իրենց պաշտպանական գօտիին ու հսկողութեան տակ առնելով: Դէպքեր եղան նոյնիսկ, որ գերագնդօրէն հերոսական մակարդակի հասան, «կամուրջի» (Նահր), Նապալի, էշրեֆիէի, Սիւն էլ Ֆիլի եւ երկաթուղիի երկայնքին:

Հ. Յ. Դ. Լիբանանի երիտասարդական Միութիւնը, սակայն, միայն պայմաններու պարտադրած ազգայնականման վնասակար դերով չէ, որ յատկանշուեցաւ: Ստացրեց ու ամբողջացուց Հայ Ազգային Դաշնակցական Մարմին կազմաւորման ու Հայ Յեղափոխական Դաշնակցութեան բովով Յանձնառու Հայու, Յանձնառու Դաշնակցական լիբանանահայ կենդանի կերպար: Այս բոլորը եղան, որովհետեւ լիբանանահայ կար, որ պայքար կը ծնէր: Պայքար կար, որ սերունդը կը ծնէր:

Հ. Յ. Դ. Լիբանանի երիտասարդական Միութեան մարտնչական փոփոխութեան մէջ վարձուորուած երիտասարդները, անցնող 3 տասնամեակներու բազմակողմանի կենսական պայքարի արդիւնքն են: Ստանալով իրենց համակարգման կերպարները, համար վարչական ու կրթական առաջատար դիրքերու համար գտնուեցան խմբագիր, ուսուցիչ, գործիչ, դեկանատ:

Արցախեան հերոսամարտին ներդրում ու կենցաղ գոհաբերած, Հայաստանի ու Ջաւախքի համակարգման կերպարները ժամանակակից մեր առաջնային իրադարձութիւններուն հիմնական ու դժուարին պարտականութիւններ ստանձնած, լիբանանահայ, եւ աւելի լայն առումով՝ սփիւռքահայ գաղութային միաւորներու հասարակական մարզերու հայրենակերտութեան գործին իրենց նկատուելի շնչուն ու փոխըմտարները բերած ու բերող անձնութիւններն են:

Կողմնակիցը: Մարտունակութիւն ինքնահաստատուած այս սերունդը, որ Հայ Դատի ներուժն ու պահանջատիրական ցուցական պայքարը հանգրուանաբար դուրս բերաւ հայու զգացական աշխարհէն ու հասցուց Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն, Եւրոպական Միութիւն, ՄԱԿի Մարդկային Իրաւացի յանձնաժողովներ, միջազգային հեղինակաւոր գանձաւոր բեմեր:

ՅՈՒՍԵՒՄ ՊԱՐԱՉԵԱՆ

«Ազատ օր»

ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐ

ԱՐԵՎԱԿԱՆԱՅԻՆ ՈՒՍԵՒՄԻԹԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԵՏՁՀԵՏԷ ԻՐԱՊԱՇՏ ԿԸ ԴԱՌՆԱՅ

Հայաստանի «Կրէնտ Հոլտինկ» ընկերութիւնը մտադիր է արտադրելու արեւակաւոր ու ժամանակակից բանող ջեռուցիչներ: Հայկական շուկային մէջ այս ջեռուցիչներուն պահանջը առաջինը համար իրանէն բերուած են «ԱՄԻԿՕ» ընկերութեան արտադրած 60 ջեռուցիչներ, որոնցմէ 30ը արդէն տեղադրուած են բնակարաններու մէջ:

Օդի նոյնիսկ - 20 սեւտրուս ջեռամատի հանրի պարագային, եթէ պայծառ արեւ կայ, 180 լիթր տարողութեամբ ջեռուցիչները կրնան 45-50 աստիճան տաքնել ջուրը:

Մամուլի ասուլիսի մը ընթացքին «Կրէնտ Հոլտինկ» ընկերութեան նախագահ Հրանդ Վարդանեան ըսաւ, թէ Հայաստան, Յունաստանէն եւ Կիպրոսէն ետք, երրորդ երկիրն է, որ ունի մեծ թիւով արեւոտ օրեր՝ տարին 266 օր, եւ շուկայութիւնն պիտի ըլլայ չօգտագործել այդ կարելիութիւնը: Ատկէ գտաւ, ամբողջ աշխարհի մէջ աւելի նպատակաւոր մար կը նկատուի վերարտադրուած ու ժամանակակից: Իրան, Թուրքիա, Յունաստան եւ Կիպրոս իրենց ջեռուցիչներուն մէջ 400 - 450 տոյար է, իսկ Հայաստանի մէջ զանոնք արտադրելու պարագային, Հ. Վարդանեանի հաւաստիացումով, 25 առ հարիւր աւելի փոքան կ'ըլլան: Բերուած ջեռուցիչները կը տրամադրուին ձերբաբար, մէկ տարուան համար երաշխանորոշուած սպասարկութեամբ, որմէ ետք բնակիչը, եթէ կը փոփոխուի պահել սարքը, պէտք է վճարէ անոր փոխարէնը:

Հ. Վարդանեան աւելցուց, որ Հայաստանի մէջ այս սարքերուն արտադրութիւնը կարելի է սկսել 1 - 2 ամիսէն, սակայն կարեւոր է պահանջը, բայց Հայաստանի մէջ նախ պէտք է զարգացնել արեւու ու ժամանակակից օգտուելու մտայնութիւնը: Ըստ կատարուած հաշիւներուն, երբ արեւու միջոցով օրական 35 լիթր ջուր տաքուի, ելելիտրականութեան հետ բաղադրուած, տարեկան կը խնայուի 40 միլիոն տոյար, իսկ կազի հետ համեմատած՝ 8 միլիոն տոյար:

ԸՍՏ ՈՒՍԱԿԱՆ ԱՂԲԻՐՆԵՐՈՒ

ՄԱԿԱՏԱՆԻ ՆԱԿԱՆՈՂՆԵՐԸ ՍՊԱՆՆՈՂՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅՈՎ ԽՈՅՍ ՏՈՒԱԾ ԵՆ

Ռուսիոյ Մակատան նահանգի նահանգապետի սպանութեան մեղաւոր խումբը մը անձեր հետեւեալ օրերու մէջ իրանէն եւ Հայաստանի վրայով մեկնած են Արաբական Միացեալ Էմիրութիւններ:

Այդ մասին վերջերս յայտարարեց Ռուսիոյ չորքէն գործոց նախարար Պետր Կրիլովը: Հայաստանի ոստիկանութեան ղեկավարութեան հետ նիստէն ետք:

«Յատկապէս վտանգաւոր յանցագործութիւններու դէմ պայքարի գլխաւոր վարչութիւնէն ստացուած տեղեկանքներու համաձայն, մենք պարզեցինք այն խումբը մը անձերը, որոնք մեղաւոր են սպանութեան կատարման: Անոնց շարքին կան հայազգի ներկայացուցիչներ», ըսաւ Կրիլովը: Հետեւաբար երկու երկիրներու իրաւապահ մարմինները միասնաբար սկսած են գործել: Նախարարը ընդգծեց, որ կուսկածելիներէն մէկը արդէն ձերբակալուած է:

Նահանգապետ Յեթթով սպանուած էր 18 Նոյեմբեր 2002ին, Մոսկուայի Նովի Արկայթ թաղամասին մէջ:

Կրիլովը նաեւ հաղորդեց, թէ Ռուսիոյ ներքին գործոց նախարարութիւնը եւ Հայաստանի ոստիկանութիւնը թմրեցուցիչ մաքսաննդութեան հակազդելու միացեալ քայլեր պիտի առնեն: Ատկէ գտաւ, քննաքննելու կարգադրուած ոճի դէմ պայքարի աշխուժացման միջոցները: Անցեալ տարի երկու կողմերու միացեալ ճիգերուն շնորհիւ զատապարտուած են 167 հայազգի անոնք: Կրիլովը նաեւ կարգադրուած ոճի մեթոդները:

Հայաստանի ոստիկանապետ Հայկ Յարութիւնեան նշեց, թէ Ռուսիոյ ներքին գործոց նախարարութեան հետ գործակցութեան սերտացումով երկու երկիրներուն իրաւապահ մարմինները յա-

ջողութիւններու կը յանգին:

ՍԵՐՎԷԹ ՊՕՂՈՍԵԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Երեւանի Նկարչի Ծան մէջ բացուած կատարուեցաւ Սերվէթ Պօղոսեանի անհատական ցուցահանդէսին, զոր հեղինակը խոր երախտագիտութեամբ նուիրած է իր մօր՝ պատմութեան ուսուցչուհի Ռոզա Պետրոսեանի ծննդեան 80ամեակին:

Ս. Պօղոսեան աւարտած է Երեւանի ճարտարագիտական համալսարանի ճարտարապետական բաժանմունքը, Հայաստանի Նկարչիներու Միութեան երիտասարդական միաւորման անդամ է: Անոր բազմաթիւ ստեղծագործութիւնները կը գտնուին կարգ մը երկիրներու հաւաքածոններու մէջ:

Ան անհատական ցուցահանդէսներով հանդէս եկած է նաեւ Մոսկուայի, Միացեալ Նահանգներու Կլիւնտլէյ, Սանթա Մոնիթա, Լակուսա Պիլ, Պեւրըլի Հիլզ եւ Միամի Պիլ քաղաքներուն մէջ:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅԵՐՈՒՆ ԲԱՂՆԻՔՆԵՐԸ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆԻԹ

Իրանի Բերման քաղաքին մէջ տեղի ունեցած է «Բաղնիք Իրանուի» մշակութիւնի մէջ» նիւթով գիտաժողովը, որակազմակերպուած էր Բերմանի նահանգապետին եւ համալսարանին համագործակցութեամբ: Գիտաժողովին հարեւրուած էին Իրանի զանազան քաղաքներէն շուրջ 50 մասնագէտներ, ինչպէս նաեւ մեծ թիւով ուսանողներ՝ Իրանի տարբեր համալսարաններէ:

Գիտաժողովին ընթացքին մասնագէտներուն կողմէ ներկայացուած են բազմաթիւ դասխոսութիւններ՝ նուիրուած պատմական արժէք ունեցող բաղնիքներու տեսակներուն, շէնքերու կառուցներուն, օգտագործման ձեւերուն եւ զանազան սովորութիւններուն:

Ըստ «Ալիք» օրաթերթին, գիտաժողովին հանդէս եկած է Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարան - մատենադարանի տնօրէն, բազմալստակ բանասէր Լեւոն Միւսաբեան, որ խօսած է «Նոր Զուլայի հայերուն բաղնիքները» նիւթին շուրջ՝ լայն հետաքրքրութիւն յառաջացնելով գիտաժողովին մասնակիցներուն մօտ:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆ - ՍԿԱՆՏԻՆԱԻԱ» ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Արտասահմանեան երկիրներու հետ մշակութային կապերու եւ համագործակցութեան հայկական ընկերութեան կեդրոնին մէջ Հայաստան - Շուէտ ընկերութեան նախաձեռնութեամբ վերջերս տեղի ունեցաւ երիտասարդ հայազգի արձույթի հանդէսը «Հայաստան - Սկանտինաւիա» գիրքին շնորհահանդէսը:

«Հայաստան-Սկանտինաւիա» աշխատութեան մէջ ներկայացուած են հայ սկանտինաւեան յարաբերութիւնները միջնադարէն սկսեալ: Գիրքին մէջ տեղեկութեան եւ ուսումնասիրութիւններու իրեն արդիւնք երեւան եկած մշակութային, պատմական եւ գրական նոր աւանդութիւններ սկանտինաւեան երկիրներուն հետ: Տրուած է նաեւ սկանտինաւեան երկիրներու հայկական փոքրաթիւ գաղութներուն պատմութիւնը:

Հեղինակին վկայութեամբ, գիրքին պատրաստութեան զարգացումը ինք յղացած է տակաւին 6 - 7 տարի առաջ, երբ գիտական գործողման մեկնած է Շուէտ: Այդ տեղի արխիւներուն եւ գրադարաններուն մէջ Ս. Բախչինեան գործած է գտնել այն պատմական ու մշակութային աւանդութիւնները, զորս հայ ժողովուրդը ունեցած է սկանտինաւեան պատմութիւններուն հետ:

Երեւանի Պետական համալսարանի դասխոս եւ պատմաբան Պետրոս Յովհաննիսեան յատկապէս կարեւոր նկատեց աշխատանքը՝ նշելով, որ այնտեղ առաջին անգամ ըլլալով իր արտադրուած ժողովական համայնքներուն պատմութիւնը: Ան հաւաստիացուց, որ աշխատութիւնը կրնայ ծառայել իրեն զատաբար Սփիւռքի պատմութիւնը ուսումնասիրելու համար:

ԱԶԳԱՅԻՆ ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԻ ԵՒ ՆԱԽԱԿԻՐԹԱՐԱՆԻ ՄԻԱՅՅԵԱԼ ՀԱՆԴԵՍԸ



Կիրակի, 22 Յունիս 2003, կէսօրէ ետք ժամը 4:30ին տեղի ունեցաւ Ազգ. Աքսոր Գասարեան վարժարանի վկայականաց բաշխման հանդիսութիւնը, հովանաւորութեամբ Գեղամ եպս. Խաչերեանի (առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի):

Սկանտինաւեան Հայաստանի զոյգ քայլերակներու ունեւորութեան ետք մանկապարտէզի աշակերտութիւնը ներկայացուց «Ձիւնասպտակ» թատերգութիւնը, որուն ընդմէջէն աշակերտները արտայայտեցին իրենց տաղանդը:

Երկրորդ մասով նախակրթարանի աշակերտները Գրիգոր Նաճարեանի խմբավարութեամբ ներկայացուցին հայ երաժիշտներէ քաղուած հանրածանօթ երգեր: «Մեսրոպ Մասիս» բանաստեղծութիւնը, ապա իրենց անունով հրատարակուած «Ձիւնասպտակ» թատերգութեան, որմէ ետք բեմ բարձրացաւ վարժարանի տնօրէնուհի Արեգնազ Աղապարտիսեան՝ փոխանցելու համար իր խօսքը: ան անդադարաբար Սփիւռքի տարածքին հայապահպանման կուսակազմի անդամակցող հայ վարժարանի անհրաժեշտութեան՝ հայ մարդը կերտելու եւ պահպանելու ներկայ սերունդը ձուլման վտանգէն:

Տրուած ըլլալով, որ այս տարի կը գուգադիպէր վարժարանի քառասուն ամեակին, այս սերունդը բախտաւոր կը սեպուէր, որովհետեւ վկայականաց բաշխման մասնակցեցաւ վարժարանի բարձրարին կիսը՝ տիկին Գասարեանը:

2002-2003 տարեշրջանի մանկապարտէզի հունձըք Արա Թորոսեան, Պօղոս Թեմեքէճեան, Ժիրայր Աւետիսեան, Սարգիս Թաշճեան, Շանթ Հաննէյեան, Մարտիր Օղճեան, Յարութ Տեմիրեան, Վարդան Մամիկոնեան, Արշալոյս Ինճեան, Արմենուհի Թեմեքէճեան, Ալին Գալուստեան, Ուլա Սարգսեան, Փաթիլ Մարգարեան, Փոլին Պեքերէճեան, Տէրէլ Ժանանեան, Ռիթա Կրակեան, Վերոնիկա Սարգսեան, Կարինէ Շատոյեան, Մարիա Տիւնեան, Յարութ Սեփեթեան:



տիսեան, Սարգիս Թաշճեան, Շանթ Հաննէյեան, Մարտիր Օղճեան, Յարութ Տեմիրեան, Վարդան Մամիկոնեան, Արշալոյս Ինճեան, Արմենուհի Թեմեքէճեան, Ալին Գալուստեան, Ուլա Սարգսեան, Փաթիլ Մարգարեան, Փոլին Պեքերէճեան, Տէրէլ Ժանանեան, Ռիթա Կրակեան, Վերոնիկա Սարգսեան, Կարինէ Շատոյեան, Մարիա Տիւնեան, Յարութ Սեփեթեան:

2002-2003 տարեշրջանի նախակրթարանի հունձըք Ժորժ Բարսեղեան, Հէտի Ալպազալ, Յարութիւն Մելքոնեան, Էվա-Այվի Ներսէսեան, Ալին Տալալեան, Դավար Գալալեան, Դավար Յովհաննէսեան, Մարլէն Պատմաճեան, Եսթեր Պատմաճեան:

ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԲՈՒԼԵՆ 2003 - 2004 ՏԱՐԵՇՐՁԱՆ

2003 - 2004 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ պիտի շարունակուին մինչեւ 31 Յուլիս 2003, ամէն օր (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն) ժամը 8:00էն 14:00:

Նորիկ աշակերտները, պիտի գերազանցեան անձնաբուրձի վկայագիրը, անհատական արձանագրութեան յատկապէս կարեւոր նկատեց աշխարհութեան կողմէ վաւերացուած փոխանցագիր եւ 3 լուսանկար:

ՄԱՆԿԱՍՍՈՒՐ ԿԸՈՂՈՒՄԻՆ 4 ամիսէն սկսեալ մանկութիւնը:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ


«ԱԶԳԱՅԻ» Ի ՀԵՌՈՒՅԱՅԻՆ ԹԻՒՒՆԵՐԸ «ԱԶԳԱՅԻ» ՌԵՍՊԱԿԱՅԻՆ ԴՈՒՄ ԲԵՆԱԾԱՅԻՆ ԲԵՆԵՒԵԱԼ ԹԻՒՆԵՐՈՒՆ. - 258526, 260115 եւ 241274:

Advertisement for AFHIL medical equipment. Includes text: 'RENT AND SALE', 'AT HOME', 'Wheelchair', 'Walker', 'Electric Bed', 'Manual Bed', 'Water Mattress', 'Cans', 'Sticks', 'Serum Tripod', 'Walking Frame', 'HOME MEDICAL EQUIPMENT SERVICES', 'Over Bed Table', 'All Kinds Of Oxygen', 'We Also Provide', 'Laboratory service', 'Physiotherapist', 'Nurses Aids', 'P.T.S. (AMBULANCE)', 'ՅՈՒՍԵՒՄՈՒՄ «ԱՐԻՆ» ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱՄԵՆԱԿ՝ ԱՅՇԻՆ, ԱՅՇԻՍ ԸԵՆՔ, Բ. ՅԱՐԿ ԾՆՆ. (01) 242556/7', 'NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.', 'ՄԱՆԿԱՍՍՈՒՐ ԿԸՈՂՈՒՄԻՆ'.



Գրական Էջ

ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՓԱԿԻ ՀՐՃՈՒՄՆՔՈՎ



ՄԻՆՉԵՒ ԵՐԲ... ՄԻՆՉԵՒ ԵՐԲ

Երկու դաժան դահիճներ անընդհատ կ'արևեն սիրտս... անոնք կը հարուածեն զիս, իսկ ես ոչինչ կրնամ ընել... միշտ կը լռեմ, անձայն կը խօսիմ, կու լամ՝ արցունքներս թաղելով աչքերուս ընդարձակ դաշտին խորերը, խաւար երկնքին տակ... մազերս կը փետտեմ եւ փոխանակ հարց տան «ինչո՞ւ», կ'ըսեն... «Ինչե՞ք է, մի՛ նայի՛ք իրեն, հեռացէ՛ք իրմէ, եւ ինչե՛ր...», որոնք չեմ կրնար գրել, որովհետեւ կը վախնամ, կը վախնամ գալիքէն, կը վախնամ Անոր՝ Հրէշին, անգուժ կրակէն:

Բայց մինչեւ ե՞րբ... մինչեւ ե՞րբ գլուխս կախ պիտի քալեմ դէպի փշոտ ապագան՝ միշտ խաբելով ինքզինքս, թէ հոն պիտի գտնեմ այդ դեղը, որ պիտի բժշկէ զիս՝ անշատելով այս անպէտք ու անիմաստ կեանքէն: Մինչեւ ե՞րբ պիտի ըսեմ. «այո՛», «սիրո՞վ», «ինչո՞ւ չէ» եւ «յարգանքի» խօսքեր: մինչ ես հոն, իմ սրտիս մէջ, կը քարկոծեմ կարծիքներս, մտածումներս, զգացումներս, որովհետեւ անոնք կը բողբոջեն ու կը մերժեն ըլլալ ծառաները այդ «յարգանքին», մտածումներուն: Մինչեւ ե՞րբ պիտի խեղդեմ ձայնս, ձերբալիւնով ու աքորելով զանոնք կոկորդիս հեռու անապատները կամ պիտի գծեմ կեղծ ժպիտ դէմքիս վրայ, մինչդեռ սիրտս կ'ընկղմի արեամբ ողորուած արցունքներու մէջ: Մինչեւ ե՞րբ պիտի հագնեմ «երջանկութեան» զգեստը, երբ իմ սիրտս վաղուց հագած է սեւը, սգաւորը... Մինչեւ ե՞րբ... գրիչս՝ միակ ընկերս, յուզուած կու լայ ու ա՛յլ կը մերժէ գրել, բայց կ'ուզեմ ըսել, որ ես ու իմ սիրտս թշնամի դարձանք, կեանքի անախորժ խամաճիկներուն, լարախաղացներուն պատճառով:

Ես ունէի երգք մը, զոր պահած էի մտքիս զբաղարանին մէջ, բայց փախո՞ւ. իմացան եւ այրեցին ամբողջ գրադարանը, երազս փոշի դարձաւ, իսկ ես հիմա խելագար գիներտան մը անկիւնը կը խմեմ կարմիր գինին՝ մոռացումի գինին, բայց ես ինչո՞ւ չեմ մոռնար... Երազս վաղուց գետ մը չէր, այլ լիճ. կը պարէր, սիրոյ լարերուն վրայ ցատկոտելով, կ'երգէր ու իր երաժշտութիւնը կը բարձրանար դէպի երկինք՝ քնացնելով կեանքի ժամանակը: հոն չկար հրաժեշտ, կային արցունքներ, սակայն երջանկութեան արցունքներ: չկար ցաւ, տառապանք, տանջանք ու վիշտ: կար Ան՝ սիրոյ Աստուածը, որ միշտ կը կանչէր զիս իր խորունկ ու իմաստուն աչքերով, իսկ ես՝ հարեցած սիրոյ գինին, կ'իյնայի բազումներուն մէջ եւ մեր աչքերը կը պատմէին սիրոյ հիանալի պատմութիւններ, մեր սրտերը կը տրոփէին կեանքի արոփիւնով, մեր հոգիները կը ձուլուէին իրարու մէջ, իսկ երբ իր հրապուրելի շրթները կը դաչկէին իմ շրթներուս, ես կը դառնայի այդ անմեղ ու արդար կառավարիչը, որ պիտի արձակէր բոլոր «հիւանդ» բանտարկեալները ու պիտի ցանէր վարդե՛ր... բազմաթիւ վարդե՛ր:

ՎԱՐԳԻՆԷ ԷԹՈՅԵԱՆ
(Երկրորդական Բ. - Լ. և Ս. Յակոբեան Քոլէճ)

ԱՐՏԷՆ ԿՏԱԿ ՄԸ

Գրիչեր էր, մուժ էր ու քունս չէր տաներ: Այն գիրքը, զոր կը թղթատէի, մէկ կողմ ձգեցի, երջանկութեան աղաղակներն ու տառապանքի ահաւոր ճիչերը խանգարեցին կեդրոնացումս: Մայր մը նստած, իր աղջիկներով խնճոթ կը սարքէր. ուրախութեան մաղթանքները անսպասու կը թափէր ու բաժակները անընդհատ կը պարպէր: Ահաւասիկ հոն կը ժայթքէր երջանկութեան ջրվէժները, ուրախութեան գազաթնակէտն էր: Ու այդ լեցուն բաժակներէն երջանկութիւնը ուժգին թափով կը հոսէր ու հետը կը տանէր բոլոր ցաւերը, տառապանքները: Հոգիս, որ ծարաւի էր ու կարօտ այդ ախորժակած, համեղ նեկտարին, իսկոյն դաւանանքով կամքիս ու պարտադրանքիս, սլացաւ հեռուները թողելով զիս մինակ՝ խորթ քրոջս հետ, որ անգին երկունքներու մէջ անընդհատ մահուան դէմ կը պայքարէր: Յանկարծ, յիշեցի անոր ծնունդը ճիշդ նոյն հողին վրայ, ուր հիմա տրտում մահը կը սպասէր. կարծես այդ հողը ուժ կու տար իրեն, դիմադրելու իր ցաւերն ու տառապանքները: հոն սնած էր ան ու հոն մեծացած էր. հոն սիրուած էր ան ու հոն սիրած էր: կը յիշեմ ինչպէս բոլորէն գաղտուկ, բոլորէն ծածուկ, քամին գտնելով սուտին ապացոյց, կը փաթթուէր իր դրացիին՝

ուսկէ մազերը յանձնելով հովին ու անոր խղճին: իսկ հիմա, դրացին չկար. թափուր էր տեղը ու թափուր՝ նաեւ քրոջս սիրտը: Հիմա, ա՛յլ կարգը իրն էր, քամին պիտի պոկէր ու անվերջ տանէր զայն այս աշխարհէն: ... Ու սուլեց քամին, քոյրս աղօթեց. եւ փչեց քամին, քոյրս դիմադրեց. քամին ցնցեց զայն, քոյրս չարտասուեց, մէջը չձոցեց. կանգնեցաւ շիտակ ու հեռուի դիտեց: Խնճոթը դեռ կը շարունակուէր, ուստի անմիջապէս ան ծոցեցաւ գետին, հողը համբուրեց ու հոն շտապեց: Մարմինը մնաց գետինը անշարժ, իսկ հոն, պարող մը աւելցաւ ու խնճոթը ուրախ թափով շարունակեցաւ մինչեւ առաւօտ... ... Առաւօտուն իջալ կալը. առի գետին ինկած ցորենի հասկը ու գետեղեցի գրքոյկիս մէջ նայեցայ վերը, արեւը իր ոսկի շողերը կ'արձակէր, լուսինն ու աստղերը յոգնած խնճոթէն վերադարձեր էին իրենց տունները, իսկ իմ քոյրս՝ այդ ցորենը, վաղուց արդէն գտեր էր նոր բնօրրան մը՝ գրքիս թերթերուն միջեւ... ԱՆՈՒՇ ԳԵՐՊԱՊԵԱՆ
(Երկրորդական Գ. - Լ. և Ս. Յակոբեան Քոլէճ)

ԴԱՍԸՆԿԵՐՈՋ ԵՐԳԻԾԱՆԿԱՐԻ ՓՈՐՋ

Մեր ծանօթացման օրը ան ինքզինք կոչեց Միհր, որ ինչպէս գիտեմք (գիտե՞մք արդե՞ք...), մեր հեթանոս աստուածաճօր՝ Արամազդի որդին էր եւ մարտիկութեան ու զգաստութեան աստուածուճի՛ր՝ Անահիտի եղբայրը: Բայց Դպրեմվանքին սեմէն ներս մտնելու եւ իմ ընկերս դառնալուն պէս, կարծես հեթանոսութիւնը վրայէն ի սպաս կը թափէր էր՝ նետելու նպատակով, ուստի՝ Միհր անուան կցեց «ան» մասնիկը, թէ եւ շատ աւելի լաւ եւ իմաստալից կ'ըլլար, եթէ անոր փակցնէր «անիկ» փաղաքականը, որով իր անունը կ'ուճեմ եւ «համեղ», հասուն տանձն շանակութիւնը, յատկանիշ մը, որ ճշգրիտ կը պատշաճի իր այնքան քաղցր բնաւորութեան եւ խոնարհ խօսակերպին: Սկիզբը ինձի, հայաստանեան դարձուածարանութեան, «մազալու», այսինքն՝ զարմանալի թուեցաւ այս անուանափոխութիւնը, բայց հազիւ մտերմացած իրարու հետ՝ քանիցս առիթ ունեցայ հաստատելու, թէ իմ Միհր - Միհրան - Միհրանիկ դասընկերս միշտ ու միայն հետամուտ է նորութիւններու, թէ կուզ տարօրինակ, նոյնիսկ՝ արտառոց... Ան հանդիսաւորապէս մուտք գործեց Դպրեմվանք 2001 թուականի Փետրուար մէկին: «Հանդիսաւորապէս» կ'ըսեմ, որովհետեւ ի պատիւ իր սոսնական մուտքին, այդ օրը այնքան ձիւն եկաւ, որ մեր բակի ռոճիկները իրենց պարզ վիճակէն պսպղուն տօնածառերու վերածուեցան, ու գոյնզգոյն մոմիկներ կախուեցան անոնց ճիւղերէն: Իմ սկիւռներ՝ մանկական խաղալիքներու նման: Իր ուսումնառութեան առաջին իսկ տարին պատահեցան նաեւ հետեւեալ ղէպքերն ու եղելութիւնները, չհաշուած մանր - մունր անցուղարձերը, ուր կար ու չկար անոր այլազանութեան հակամէտ եթէ ոչ մասնակցութիւնը, առնուազն բուռն ցանկութիւնը: Հաւ ու հակաթիթի, ինչո՞ւ չէ, նաեւ աքորի սիրահար բարեկա-

միս բարձր հովանաւորութեան տակ Դպրեմվանքի հաւերը տասը, քսան եւ աւելի տոկոսով բազմացան...: Այդիկին յարակից սենեակը, որուն օրերը վաղուց հաշուուած էին, եւ անոր խորխորձ գոյութիւնը կրնար վտանգել թէ կուզ վառեակի մը, ճուտիկի մը կեանքը, մեր հերոսին ջերմեռանդ աղօթքներուն ներգործութեամբ անձրեւոտ գիշեր մը փառաւորապէս փուլ եկաւ...: Նոյն այդ, կ'ուզեմ ըսել՝ բազկատարած աղօթքներով խուրմայի ճամբեգրեալ ծառը, խուրմայի, զոր պաշտելու աստիճան կը սիրէ հոտուր տուր ու ճաշակելի Միհրան - Միհրանիկը, այո՛, խուրմայի ծառը, մեղք գործած կ'ըլլամ, եթէ ըսեմ, թէ միրգերու ծանրութեան տակ ճաշակոտոր եղաւ, բայց բոլորով սրտիւ կրնամ վկայել, որ նախորդ տարուան տասը պտուղին տեղ տասնմէկ հատ հասցուց, այդ ալ աշնան ամենավերջին օրը...: Եւ վերջապէս 2001 թուականը բացառիկ եղաւ այն իմաստով, որ տարեվերջին շուրջ քսան հոգի վտարուեցան Դպրեմվանքէն, եւ իմ դասընկերս գոչեց, լատիներէնն ու գրաբարը խառնելով իրարու. «De pro fundis գոհանամք զգէն, Տէ՛ր, զի բարեգեթութիւն քո փրկեաց զմեզ, յանօրինացն. Amen...»: Տուեալ կենցաղային «մանրութիւններէն» ետք եկէք գաղափար մը կազմեք անոր կազմախօսարկան բարեմասնութիւններուն մասին: Գլուխը յար եւ նման է թթու դրած ձմեռանային ձմեռուկի, միայն՝ անկուտի, այսինքն՝ կուտը պարտաւոր: Մազերն են ոլորապտուտ փշաթելեր, որոնք կ'արգելափակեն կարծես տարիներով տունէ տեղէ հեռու բանտարկեալի մը դէմքին արտայայտութիւնը, իսկ թերահաւատութեամբ

ՏԻԳՐԱՆ ԱԻԵՏԻՍԵԱՆ
(Ա. Ընծայարան)

Շար.ը՝ էջ 8

ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ ԽՆՃՈՅՔԸ

Մայրամուտ...
Անտառներուն մէջ
Նայեաղները կը խաղան:
Ո՛հ աստուածային կատակերգութիւնը
կ'երգեն,
Տանթիի աղօթքը կ'արտասանեն:
Անէպր կեանքի ունայնութեան մէջ,
Գինիի բաժակներով՝ հարբած՝
Ողիմպոսի աստուածները կը հրաւիրեն
Մասնակցելու անոնց մեղստո
խորհուրդին:

Անուշ մեղեդիի մը հնչիւնին տակ
Սիւս մէջտեղ կու գայ Աֆրոդիտէն,
Չեռքերը պարպած,
Անմահութիւնը գրկելու:
Աստուածները,
Պահ մը կանգնած՝
Անոր աստուածութեան է, որ փառք
կու տան.

Ու խոնարհելով
Անոր առջեւ,
Անկէ
Սէր կը մուրան:

ՄԻՀՐԱՆ ԿԻՍ. ՍՐԿ. ՇԵՍՈՒԿԵԱՆ
(Բ. Ընծայարան)

ԱՐՇԱԼՈՅՍ

Քեզ կը դիտե՛մ, արշալոյս,
Ամէնօրեայ աստուածային շնորհք ու
պարգէւ,
Որ կը բաշխուիս խաւարած հոգիներուն
Եւ թոյլ կու տաս,
Որ փառաւորենք արարիչն ու անով մեզ:

Քեզ ներգրած ո՛վ արշալոյս,
Երբ հուրեան մէջ սառած հոգիս
կը ջերմանայ,
Ու պահակի մը պէս արթննալով
կը կանգնի,
Պատրաստ՝ նոր օրուան,
Որ քեզ մով կը փոռուի իմ դէմ:

Քեզի կը կարօտիմ, ո՛վ լուսաբաց,
Երբ օր մը յանկարծ քեզ չդիմաւորեմ
Կը վրկուիմ կարծես լոյսէն կեանքիս,
Որ լոյսն է կեանքիս ամէնօրեայ
Եւ կանչը սրտիս:

ՀՐԱՅՐ ՊԵՏՈՒՐԵԱՆ
(Բ. Ընծայարան)

ԻՆՉՈՒՏ ՏԵԽՈՒՐ Է ԼՈՒՍԻՆՆ ԱՅՍ ԳԻՇԵՐ...

(Նուիրում՝ մօրս,
մայրերու տօնի առթիւ)

Լուսինը կու լայ. տըխուր է, տըխուր,
Արցունքները իր կը կապմեն աստղեր,
Սիւս թէ ինչո՛ւ աստղ կայ ամէնուր,
Ինչո՞ւ տըխուր է լուսինն այս գիշեր...

Լուսինը կու լայ արցունք արծաթէ,
Արդեօք ի՞նչ ցաւ էր, որ պի՛նք կը տանջէր,
Սիրտը հուր - հրրատ, հոգին երկաթէ,
Բայց աչքերը չոյ՞գ՝ հեղեղ այս գիշեր:

Հարց տրուի իրեն, թէ ինչո՞ւ կու լար,
Վրաստի սէր մըն էր, որ պի՛նք կը տանջէր,
Ապա տա ըսաւ. «Փոքրիկ սիրահար,
Այո՛, սէր մը ինձ գերեց այս գիշեր:

... Բայց այս սէրը լոկ, սէրերէն անկեղծ
Սրտերէն հոսող, սրտերուն խօսող
Քու գրչովդ մերկ, անփորձ բանաստեղծ,
Երգ զրբէ ինձի՛՝ աշխարհը ցընդոյ:

Երգ զրբէ ինձի, մօր մը նըւիրուած,
Մօր մը, որուն ես երբեք չեմ տեսեր,
Սիւս թէ ինչու կու լամ, անիծուած
Քանպի մայրերու տօնն է այս գիշեր...

Դազաղ կը մըտնեմ ամէն օր ողջ-ողջ,
Ես, որ առանց մօր աշխարհի եմ եկեր.
Շրթներուս վրայ՝ մօր երգեր ամբողջ,
Թէկուզ լացընուն պիս հապար գիշերներ:

Թիւ մ'այ անլցուր թիւին անհամար
Անոնց, որ ունին խօսուն գրիչներ,
Քանպի մօր փառքը երգելու համար
Շատ քիչ են թէկուզ բիր - բիր երգիչներ:

ԹԱԼԻՆ ԱՇԵՐԵԱՆ
(Երկրորդական Բ. - Լ. և Ս. Յակոբեան Քոլէճ)

Տարեվերջ է դարձեալ: Հակառակ նիւթական դժուարութիւններուն եւ տարուէ տարի աւելի շեշտուող կարգ մը հայ ծնողներու, բայց մ'ա՛նճաւնդ բարեկեցիկ շրջանակներու անտարբերութեան, իր գոյամարտ մ'ողող Հայ Դպրոցը դարձեալ յաղթանակով աւարտեց տարին: Պատասխանատուներուն նիւթաբարոյական գոհողութիւնները անարձագանգ չմնացին եւ, փաստօրէն, հայ հոգիի ամբացման ու պայծառացման նպատակով ի գործ դրուած ճիգերը այս օրերուն կը պսակւին նուազ խօսելու եւ շատ գործելու իմաստութեան շօշափելի արդիւնքներով: Աւարտական նոր փաղանգներ կը միանան մեր ժողովուրդի ծառայութեան շարքերը խոսացուցած վերջին տարիներու հունձքերուն: Հայ դպրոցը ամուր եւ անխոց տեսնելու տարեկան իր հաւաքական տրամադրութիւնները առաւել հաստատ համոզում ու հաւատք կը դառնան, եւ ձեռք ձգուած ոգեշնչող արդիւնքը յաւելեալ պատրաստութիւններու տակ կը դնէ բոլորը՝ մեր ազգային, կրթական, միութեանական, հայրենակցական թէ այլ հաւաքականութիւններէն մինչեւ անհատ բարերարներ ու մեծահարուստներ: Լիրանահի հայութեան կարեւորութեան եւ բացառիկ դերակատարութեան խոր հաւատք ընծայող հեռու եւ մօտիկ հայագաղութներն ու անհատ բարերարները պիտի շարունակեն յաւելեալ թափ տալ նուիրաբերման իրենց ճիգերուն: Հայ դպրոցը պիտի ամրապնդուի ա՛յլ առաւել եւ մեր գալիք օրը պիտի ստանայ պայծառ, զուարթ ու զոպպիրկ յաւելեալ գոյներ: Պայծառութեան ամենախօսունք փաստերը նոյնիմբը մեր վաղուան սպասարկու այսօրուան աշակերտներն են: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Զարեհեան դպրեվանքի սաներուն «Գլաճոր» տարեգիրքէն ու Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան բոլեի «Ճառագայթ» պաշտօնաթերթէն քաղուած եւ բովի սիւնակներով հրամցուած գրական փորձերը բաւարար գաղափար մը կրնան տալ ընդհանուրին մասին: Մեր աշակերտներուն իմացական պայծառութեան, բժախնդիր մօտեցումին եւ նուիրման որակին մասին աւելի մօտէն ծանօթանալու համար, կ'արժէ յատուկ ուշադրութեամբ կարդալ նաեւ անոնց ստորագրութիւնը կրող ուսումնասիրութիւններն ու յօդուածները: Պայծառ մտքի, ազնիւ հոգիի եւ պողպատեայ հաւատքի արգասիք հանդիսացող «Գլաճոր»-ն ու «Ճառագայթ»-ը հայ դպրոցի փառքն ու հգօրութիւնը մեքսիկական տառերով նաեւնչող պարտաւորութիւններ են, որոնց շողերուն ընդմէջէն հայ լեզուի երկերեքանգ գուարբութեամբ կը բարախեն մտաղած հոգիներ: Բանաստեղծական ինքնատպուրիւն մատնող ընդգծելի պատկերներով, ոճ ու դրոշմ ունեցող արձակ փորձի նուրբ նաշակով, երգիծական յստակ երանգներով տիպար կարկառելու գեղատեսիլ շնորհով եւ այլ արժանիքներով օժտուած այս գրական նախափորձերը փաստ են, թէ հայ դպրոցին տարին անգամ մը եւս կը փակւի փայլուն արդիւնքներով, որ ցանուած առողջ սերմերը ծլած են բազմապատիկ, յոռետես արտայայտութիւններով արմատաւորութեան արտաբերութեան հրեւանքը պէտք է դառնայ համընդհանուր ապրում: Երբը պիտի շարունակուի:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ



ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԵԽԱՐՀ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՉՆԱԽՈՒՄՔԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՅՔԸ



Անդրերկն եւ յունարէն լեզուներով հանրութեան ներկայացող Յունաստանի Հայ Դատի Յանձնախումբի պաշտօնական կայքը ուղարկու է իր նիւթերով եւ կոկիկ կառոյցով հաւասարապէս:

Կայքը կը բացուի ՄԱԿի Յեղասպանութեան Ուխտին մէջ «Յեղասպանութիւն» եզրի սահմանումով, որմէ ետք կը նշուի, թէ Հայկական Յեղասպանութիւնը կը լրացընէ սահմանումի բոլոր նախադրեալները:


